Ո՞ւր կարելի է գտնել զորություն

Ինչպես է Աստված հոգում մեր կարիքները (մաս 3)

«Այն ժամանակ դեռ մխիթարություն կունենայի և անխնա ցավի մեջ կուրախանայի, որ Սրբի խոսքերը չեմ ուրացել։» Հոբ 6:10

«Աստծու արքայությունը ոչ թե խոսքով է, այլ զորությամբ։»
Ա Կորնթացիներին 4:20

Էլ Ծաղդայ "Ես եմ քո ամենա հզոր Աստվածը"

«Զարմանալի ես... ո՜վ Աստված, …նա զորություն և կարողություն է տալիս ժողովրդին.» Սաղմոսներ 68:35

Ե՞ր եմ կարող Աստծո զորության հույս դնել

- **Երբ հոգնած եմ**

«Հավիտենական Աստված է Տերը։ Նա չի հոգնել և չի թուլացել։ Նա է հոգնածին ուժ տվողը, նա ավելացնում է կարողություն չունեցողի զորությունը։ Տիրոջն ապավինողները կնորոգվեն ուժով, կվազեն և չեն հոգնի, կգնան և չեն նվաղի։» Եսայի 40:28, 31

- **Երբ տկար եմ**

«(Աստված) ինձ ասաց «Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում»։ Արդ ավելի հոժարությամբ իմ տկարություններով կպարծենամ, որպեսզի Քրիստոսի զորությունն իմ մեջ բնակվի։»
Բ Կորնթացիներին 12:9-10

- **Երբ ցավի մեջ եմ**

«Տերը կմխիթարի նրան տկարության անկողնում.»
Սաղմոսներ 41:3

- **Երբ փորձության մեջ եմ**

«…իմ մեջ ցանկանալը կա, բայց բարին գործելու կարողությունը չեմ գտնում։» Հռոմեացիներին 7:18

«Ձեզ ուրիշ փորձություն չի պատահել, բացի մարդկային փորձությունից։ Բայց Աստված հավատարիմ է. նա ձեզ չի թողնի ձեր կարողությունից առավել փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք դիմանալ։»
Ա Կորնթացիներին 10:13

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով։»
Փիլիպպեցիներին 4:13

Ի՞նչ կարող եմ անել Աստծո զորությունը ստանալու համար

1. **Ընդունիր որ տկար ես**

«Մարդու ամբարտավանությունը նրան կնվաստացնի, բայց հեզահոգին փառքի կարժանանա։» Առակներ 29:23

2. **Միացիր զորության կենտրոնին**

Հիսուսն ասաց։ «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը. ով ինձ հետ է միավորվում, իսկ ես՝ նրա հետ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ ոչինչ չեք կարող անել։» Հովհաննես 15:5

3. **Ընտրիր Աստծո ճանապարհը, այդ հավատքով, որ Աստծո զորությունը ի հայտ կգա**

«Հավատը հուսացված բաների հաստատումն ու աներևույթ բաների ապացույցն է.» Եբրայեցիներին 11:1

«Տիրոջն ապավինողները կնորոգվեն ուժով, արծիվների պես թևերով վեր կսլանան, կվազեն և չեն հոգնի, կգնան և չեն նվաղի։»
Եսայի 40:31

«Եվ եթե որդիներ ենք, ապա նաև ժառանգներ, Աստծու ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ…։»
Հռոմեացիներին 8:17

Հաջորդ քարոզի թեման

Աստծո Սիրո զորությունը

Հովիվ Սարո Խաչիկեան